ԹԱԴԵՎՈՍ ԱՎԴԱԼԲԵԳՅԱՆԻ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ
(Մենդյան 90-ամյակի առթիվ)

Ն. Ռ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

Սովետահայ ականավոր գիտնական Թադևոս Ավդալբեգյանը (1885—1937) ծնվել է Պարսկաստանի Մակու քաղաքում։ 1907 թ. ավարտելով Գևորգյան ճեմարանը, զբաղվել է ուսուցչությամբ և գիտական աշխատանքով։

Սովետական իշխանության տարիներին Ավդալբեգյանը Երևանի համալսարանում առաջինն է կարդացել հասարակական մտքի և տնտեսական պատմության դասընթացներ։ Ջուգահեռաբար կատարելով պատմա-տնտեսագիտական բնույթի հետազոտություններ, նա ստեղծել է արժեքավոր ուսումնասիրություններ։

Ավդալբեգյանի գիտական հետազոտություններում իր ուրույն տեղն ունի մարքսիստական քաղաքատնտեսության պրոպագանդան, որից հատկապես արժեքավոր է «Կապիտալի» հայերեն թարգմանությունը՝ կատարված գիրքաներեն բնագրից։

Ավդալբեգյանի գիտական հետազոտությունների շրջանակները բավական ընդարձակ են։ Նա տնտեսագետ է, պատմաբան, բանասեր, գրականագետ, բառարանագետ, որոնք փոխադարձաբար լրացնում են միմյանց և ուսումնասիրվող պրոբլեմը լուսաբանում բազմակողմանի ու խորազնին ըմբռնմամբ։

Ավդալբեգյանը հիմնականում տնտեսագիտության պատմաբան է, և նրա աշխատությունները պետք է ուսումնասիրել ըստ գիտության այդ բնագավառի երկու ճյուղերի՝ Հայաստանի տնտեսական պատմություն և հայ տնտեսագիտական մտքի պատմություն։

Սովետական կարգերի հաստատման առաջին իսկ տարիներից Ավդալբեգյանը մտահոգվում է Հայաստանի տնտեսական պատմության ստեղծման խնդրով։ Նա իրավամբ գրում է, որ հայ ժողովրդի պատմության հիմքը Հայաստանի տնտեսական պատմությունն է, որը «հայագիտության ամենահիմնական առարկաներից մեկն է»[1]։ Հայագիտության այս կարևոր ճյուղը, սակայն, նոր է ձևավորվել, գանգատվում է հեղինակը։ Այդ բնագավառում առաջին քայլերը կատարում է ինքը՝ Ավդալբեգյանը։ Նա զգալի թվով աշխատություններ է նվիրել Հայաստանի միջին դարերի տնտեսական զարգացման առանձին խնդիրներին, որոնք կարող են լինել այդ ժամանակաշրջանի տնտեսական ամբողջական պատմության նշանաձողեր, պատմություն, որը, ցավոք, մինչև օրս դեռ չի ստեղծվել։

Հայաստանի միջին դարերի տնտեսական պատմության ուսումնասիրության տեսակետից արժեքավոր են «հաս», «սակ», «բաժ» հասկացություններին նվիրված Ավդալբեգյանի հետազոտությունը։ Հայ պատմագրության մեջ

---

[1] Թադ. Ավդալբեգյան, Հայագիտական հետազոտություններ, Երևան, 1969, էջ 306։

այդ հասկացությունները կապվել են այս կամ այն հարկի տեսակի հետ։ Գիտնականը այս հասկացությունների բովանդակությունը քննարկում է հասարակության տնտեսական զարգացմանը զուգընթաց և իր հետազոտությունը ամփոփում հետևյալ տողերով. «Այսպիսով, հաս բառի իմաստաբանական զարգացման աստիճաններն են՝ հաս-հասանելիք (մաս), հաս-հասույթ, հաստուրք ու հաս-հարկ»[2]։ Այս առումով էլ ավելորդ են այն վիճաբանությունները, թե որ հարկի տեսակն է հաս կոչվել։

Ավդալբեգյանը նույն մեթոդոլոգիայով ուսումնասիրում է նաև սակ հասկացության էվոլյուցիան։ Նա համոզիչ կերպով ցույց է տալիս, որ հայ մատենագրության մեջ բազմաթիվ դեպքերում սակը ամենևին էլ հարկի իմաստ չի ունեցել։ Այն շատ հաճախ է գործածվել չափ, դրույթ իմաստով։

Ավդալբեգյանը ավելի հանգամանորեն է քննարկում բաժ հասկացությունը, որը հայագիտական գրականության մեջ մեկնաբանվել է միայն որպես մաքս։ Այն, որ մատենագրական աղբյուրներում բաժը ունեցել է մաքսի նշանակություն, հեղինակը համարում է անվիճելի։ Բայց նա ցույց է տալիս, որ բաժը ամենևին էլ միայն մաքսի իմաստ չի ունեցել, այն արտահայտել է նաև բազմաթիվ այլ բնույթի հարաբերություններ։ Նախնադարյան համայնական հասարակարգում հավասար բաժանումը, բաժինը բաշխման հարաբերությունների հիմքն էր։ Հետագայում դասակարգային հասարակության մեջ այն դառնում է բաժ-հարկ, իսկ պետությունների սահմանագլխում առաջանում են բաժ-մաքս գանձույթները։ Այնուհետև, միջին դարերում բաժը օգտագործվել է առևտրական հարկի իմաստով ընդհանրապես՝ իր մի շարք տարբերակներով։ «Այսպիսով, տնտեսական զարգացման հետևանքով,— գրում է հեղինակը,— ոչ միայն առաջ են գալիս բառի նորանոր առումներ, այլև այս առումները զորանում, ծավալվում, գերիշխում են և կամ թուլանում, աղոտանում, կծկվում, սահում են տափե-տափ՝ տնտեսական պայմանների պահանջներին հլու, հնազանդ»[3]։ Հեղինակի այս հետևությունները հիմնավորվում են մատենագրական աղբյուրների նյութերի մանրազնին վերլուծությամբ։

Միջին դարերից մեզ հասած գրական ժառանգության մեջ իրենց ուրույն տեղն ունեն վիմական արձանագրությունները, որոնք հարուստ են վանքերին տրված նվիրատվությունների մասին տեղեկություններով։ Հայ իշխաններն ու հարուստ մեծատուններն, իրենց հոգու փրկության համար, վանքերին են նվիրել կանխիկ դրամ, այգիներ, գյուղեր, հողամասեր, անասուններ, շարժական ու անշարժ կայքի այլևայլ տեսակներ և արժանացել ժամ-պատարագների։

Այս ուղղությամբ բազմաթիվ վիմական արձանագրությունների, ինչպես նաև լրացուցիչ աղբյուրների հետազոտության հիման վրա Ավդալբեգյանը համոզիչ կերպով ցույց է տալիս, որ ժամ-պատարագները ունեցել են սակագին, որի առավելագույն ու նվազագույն սահմանները նա որոշում է համապատասխան հաշվարկումներով։

Ավդալբեգյանը իրավամբ նշում է, որ գների պատմությունը բացառիկ կարևորություն ունի երկրի տնտեսական զարգացման ուսումնասիրության համար։ Իսկ մեր մատենագրական աղբյուրները գների վերաբերյալ տեղեկու-

---

2 Նույն տեղում, էջ 371։

3 Նույն տեղում, էջ 404։

թյուններ գրեթե չեն պարունակում։ Այս տեսակետից ժամ-պատարագների սակագների սահմանումը բացառիկ կարևորություն ունի այն առումով, որ հնարավորություն է տալիս որոշելու վանքին նվիրաբերված կայքի ընդհանուր արժողությունը, դրանց միավորների գինը։ Իսկ կայքի գների ու տոկոսադրույքների առկայության դեպքում հնարավոր է դառնում պարզելու զանազան տընտեսական օբյեկտների եկամտաբերության չափը, հարկային դրույքները, պատկերացում կազմել ապրանքային հարաբերությունների զարգացման աստիճանի, դրամաշրջանառության ծավալի մասին և պարզել երկրի տնտեսական զարգացման պատմության հետ կապված բազմաթիվ հարցեր։

Հողային հարաբերությունների ուսումնասիրությունը կենտրոնական տեղ է գրավում տնտեսական պատմության մեջ, որոնց նյութական արտահայտությունը հարկերն են, նկատում է Ավդալբեգյանը։ Հանգամանորեն ուսումնասիրելով հարկերի տեսակներն ու չափերը, հեղինակը բացահայտում է թուրքական և պարսկական բռնակալների տնտեսական քաղաքականության էությունը։ Կողոպուտն ու ավերածությունները եղել են այդ քաղաքականության բնորոշ առանձնահատկությունները։ Նվաճած երկրների աղքատությունը ասիական այդ բռնակալները համարում էին իրենց տիրապետությունն ամրապընդելու հիմնական պայմանը։ Այս քաղաքականության անխուսափելի հետևանքը լինում է այն, որ շահագործող «դասակարգը ոչ միայն խլում է կենդանի աշխատանքի ամբողջ բաժինը,—գրում է Ավդալբեգյանը,—այլև կուրորեն սկըսում է լափել կուտակված աշխատանքի մնացորդները՝ գործիքներն ու մաշվածքի արժեքն էլ։ Վերջին դեպքում ուժասպառ է լինում ոչ միայն արտադրող դասակարգը, այլ անհնարին է դառնում վերարտադրությունն ընդհանրապես։ Ոչ միայն մասսաներն են մուրացիկ ու սովամահ լինում, այլև երկիրն է ավերվում ու ամայանում իսպառ»[4]։ Գիտնականի այս ուսումնասիրությունների արդյունքները խիստ շահեկան են Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալու առաջադիմական նշանակությունը ցույց տալու համար։

Հայաստանի ցամաքային կլիմայի պայմաններում ոռոգման սիստեմը կենսական նշանակություն է ունեցել երկրի տնտեսական կյանքում, որտեղ գյուղատնտեսությունը եղել է արտադրության գերիշխող ճյուղը։ Մեր երկրի ոռոգման ցանցի պատմությանը Ավդալբեգյանը նվիրել է մի քանի ուսումնասիրություններ և ցույց է տվել, որ այդ ջրանցքները կառուցել են հիմնականում խաներն ու բեկերը կամ հայկական վանքերը՝ խնդիր ունենալով շրջակա գյուղերը դարձնել հարկատու և ենթարկել իրենց։

Տնտեսագիտական մտքի պատմությանը նվիրված Ավդալբեգյանի աշխատություններն ընդգրկում են հետևյալ պրոբլեմները. 1) հայ միջնադարյան աշխատավորական շարժումների գաղափարախոսություն, 2) հայ ազատագրական շարժումների գաղափարախոսություն, 3) կապիտալիզմի դարաշրջանի հայ հասարակական հոսանքների բնութագրություն, 4) մարքսիստական տնտեսագիտական ուսմունքի պրոպագանդա։

Միջին դարերում տարածված շարժումներից էին աղանդավորական հոսանքները, որոնց գաղափարախոսության լուսաբանումը տնտեսագիտական մտքի պատմության կարևոր խնդիրներից մեկն է։ Հայագիտական գրակա-

---

4 Թ ա դ. Ա վ դ ա լ բ ե գ յ ա ն, Երկրագործական հավելյալ արդյունքի նորման 17—18-րդ դարերում և 19-րդ դարի սկզբին, «Նորք», 1923, գիրք երրորդ, էջ 115։

նության մեջ հիմնավորապես ուսումնասիրված են միայն վաղ և զարգացած ֆեոդալիզմի (IV—XIV դդ.) ժամանակաշրջանների աղանդավորական հոսանքները (մծղնեականներ, բորբորիտներ, մանիքեականներ, պավլիկյաններ, թոնդրակեցիներ, արևորդիներ)։

Ավդալբեգյանը իրավամբ նշում է, որ միջին դարերում իշխող դասակարգերի դեմ ուղղված աշխատավորների գաղափարական հարձակումների թիրախը եկեղեցին էր։ Այս պայքարի արտահայտության ձևը աղանդավորական շարժումներն են, որոնք չէին կարող վերանալ, քանի դեռ պայքարը հարատևում էր։ Հետևաբար, հայ հասարակական հոսանքների թվում պետք է ուսումնասիրել նաև աղանդավորական շարժումները։

Այս ճիշտ դրույթից ելնելով, Ավդալբեգյանը հանգամանորեն վերլուծում է XVI—XVII դդ. հակաեկեղեցական շարժումների բովանդակությունը՝ կապված հոգևորական Մեխլուի և արհեստավոր Թոմասի անունների հետ։ Ըստ որում, Մեխլուի շարժումը, ինչպես ցույց է տալիս ուսումնասիրությունը, չափավոր բնույթ ուներ։ Այն ուղղված էր միայն կուսակրոնության դեմ և ամենևին չէր դիպչում քրիստոնեական կրոնի հիմնական սկզբունքներին։ Ուշագրավն այն է, որ Մեխլուն, քաջատեղյակ լինելով կուսակրոնների շրջանում տարածված այլասերված բարքերին, նրանց համարում էր սրբապիղծներ և ոչնչացնում հրով ու սրով։ Այս էր, անշուշտ, աշխատավորների համար Մեխլուի գործունեության մեջ գրավիչը։ Սևագլուխ կուսակրոնների դարավոր անպտուղ, ձրիակեր կյանքը հակասում էր հավասարարական կենցաղավարության վերաբերյալ ունեցած աշխատավորների ըմբռնումներին։ Իսկ Մեխլուի անընշասեր և սակավապետ ապրելակերպը միանգամայն ներդաշնակում էր այդ պատկերացումներին, որը և աշխատավոր ժողովրդին պայքարի էր հանում տիրող անարդարությունների դեմ։

Իրականում, սակայն, այդ պայքարը «ձգում էր դեպի վաղօրյա սակավապետ ու ճգնական քրիստոնեությունը»,—ամփոփում է շարժման իր բնութագրությունը Ավդալբեգյանը։ Եվ գա միանգամայն ճիշտ է, որը, սակայն, չի ժխտում շարժման հակաֆեոդալական բնույթը։ Նարոդնիկության մանրբուրժուական ծրագրերի իր գնահատականում Վ. Ի. Լենինը պահանջում էր շրջահայաց լինել՝ նրանց ռեակցիոն կողմերը ցույց տալով հանդերձ «չպետք է մոռանալ նրանց դեմոկրատական մասը»[5]։ Աղանդավորների հավասարարական բաշխման պահանջը վերցված էր վաղ քրիստոնեության համայնավարության ուսմունքից, որն ամենևին չի ժխտում հավասարության սկզբունքի դեմոկրատական բնույթը։

Մյուս աղանդավորական շարժումը ծագում է բուն Հայաստանից դուրս, Պարսկաստանի Նոր Ջուղա գաղութում, որի պարագլուխը եղել է Թոմաս անունով մի դերձակ։ Ավդալբեգյանը ցույց է տալիս, որ այս աղանդը իր գաղափարական բովանդակությամբ եղել է ամենաարմատականը միջնադարյան բոլոր շարժումների համեմատությամբ։ Բերելով Հակոբ Ջուղայեցու, Զաքարիա Սարկավագի վկայությունները, մի կողմից, և Ար. Լաստիվերտցու, Գրիգոր Մագիստրոսի, Գր. Նարեկացու ասույթները, մյուս կողմից, Ավդալբեգյանը ցույց է տալիս, որ XVII դ. այս արհեստավորական աղանդավորական շարժումը խարսխված էր նախկին շարժումների գաղափարական սկզբունքների

5 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 1, էջ 366։

վրա և հանդիսանում էր նրանց տրամաբանական զարգացումը՝ առավել արմատական պահանջներով։ Ավդալբեգյանը դրում է, որ մեր պատմիչների վկայությամբ աղանդապետը հայհոյում էր Քրիստոսի ուղղափառ հավատը և մերժում Քրիստոսի և Մարիամի աստվածության գաղափարը, ժխտում էր անդրշիրիմյան կյանքի առասպելը և անարգում եկեղեցական ծիսակատարությունները որպես խաբեություն, իսկ իրենց՝ կրոնավորներին, անվանում խաբեբաներ։

Շարժման թափի ու հզորության մասին վկայում է այն փաստը, գրում է Ավդալբեգյանը, որ Նոր Ջուղայի առաջնորդ Խաչատուր Կեսարացին գումարում է մի ամբողջ համաժողով (որը հավանաբար բաղկացած էր հոգևոր ու աշխարհիկ իշխանավորներից)[6], որի մասնակիցներն, անշուշտ, աղանդավորների դեմ անհաշտ պայքար են ծավալում բոլոր հին ու նոր հայտնի միջոցներով։

Թուրք-պարսկական բռնակալության դեմ հայ ազատագրական շարժումը, ինչպես բուն Հայաստանում, այնպես և հայկական գաղութներում ծավալվում էր երկու ուղղությամբ։ Հնդկաստանում զարգացող առևտրական բուրժուազիայի գործունեության շրջանակներն աստիճանաբար սեղմվում էին անգլիական կապիտալի կողմից, և նա տենչում էր ազատ ու անկաշկանդ գործունեություն ծավալել ազատագրված հայրենի երկրում, որտեղ հայկական վերածնունդը պետք է կատարվեր բուրժուական սահմանադրության հիմունքներով։ Հայրենիքի ազատագրման այս ծրագիրը կազմում էր Շահամիրյանի խմբակի գործունեության բովանդակությունը, որը, սակայն, հայ կղերա-կալվածատիրական շրջանների համար անընդունելի էր։ Վերջինների խնդիրն էր Հայաստանի պետականությունը վերականգնել միապետական իշխանության սկզբունքներով՝ հիմնված կալվածատիրական սեփականատիրության վրա։ Ավդալբեգյանին գերազանցապես հետաքրքրում էր Շահամիրյանի խմբակի գրական-հասարակական գործունեությունը, որին և նա նվիրել է մի քանի հետազոտություններ։ Ավդալբեգյանը ցույց է տալիս, որ Շահամիր Շահամիրյանը եղել է նորելուկ բուրժուազիայի լուսամիտ գաղափարախոսը, բուրժուադեմոկրատական հոսանքի հիմնադիրը հայ իրականության մեջ։

Կապիտալիզմի ժամանակաշրջանի հայ հասարակական հոսանքների ներկայացուցիչների հայացքների բնութագրությանը Ավդալբեգյանը անդրադարձել է իր գրական գործունեության առաջին շրջանում գրված մի շարք աշխատություններում։

Միքայել Նալբանդյանը լինելով հայ հրապարակախոսական մտքի կենտրոնական դեմքը, Ավդալբեգյանի ուշադրությունը գրավել է դեռ 1912 թ.։ Ընդարձակ մի հետազոտության մեջ նա սահմանափակվել է միայն Նալբանդյանի սոցիալ-տնտեսագիտական հայացքների մանրակրկիտ վերլուծությամբ։

Ավդալբեգյանի ուսումնասիրության հիմնական խնդիրն է՝ պարզել, թե Նալբանդյանը ո՞ր դասակարգի գաղափարախոսն է։ Այս հարցի լուսաբանումը նա սկսում է այն ճիշտ ելակետից, որ Նալբանդյանը հանդես է գալիս որպես հասարակ ժողովրդի շահերի պաշտպան՝ ընդգծելով աշխատավորների և շահագործողների շահերի հակադրությունը։ «Յուր դավանած, «ազգի» այսինքն հասարակ ժողովրդի շահերի տեսակետից է մոտենում Նալբանդյանը հասա-

6 Մեխլուի դեմ, հոգևորական բոլոր հեղինակությունների հետ միասին, հանդես եկավ նաև Երևանի խանն իր ֆառաշներով։

ական ճարցերի քննությանը»[7]: Ավդալբեգյանի հետ միասին պետք է իրոք ընդգծել այս ճիշտ ելակետը։ Այո, Նալբանդյանը հասարակական զարգացման բոլոր ճարցերը քննարկում էր հասարակ ժողովրդի շահերի տեսակետից: Այս առումով է հենց նա հանդես գալիս կապիտալիստական հասարակության այլանդակությունների ծավալուն քննադատությամբ, որը հանգամանորեն շարադրում է Ավդալբեգյանը։ Նալբանդյանը իրավամբ ցույց է տալիս, որ հարստությունը լցվում է շահագործող փոքրամասնության գրպանը, իսկ այդ հարստությունը ստեղծող աշխատավորներն իրենց աղքատիկ գոյությունը քարշ են տալիս տառապանքներով։ Այս աղաղակող անարդարության հիմքը Նալբանդյանը համարում է հողի ու կապիտալի մասնավոր սեփականությունը, որից և բխում է հողի համայնացման՝ որպես շարիքը արմատախիլ անելու միակ միջոցի նրա տրամաբանական պահանջը։

Թադևոս Ավդալբեգյանը միանգամայն ճիշտ է գնահատում նաև Նալբանդյանի հայացքները ազգության և ազգային հարցի լուծման վերաբերյալ։ Նալբանդյանը բուրժուական ազգայնականներից արմատապես տարբերվում է նրանով, որ ազգություն ասելով հասկանում է հասարակ ժողովուրդը, որի ազատագրումը յուրային և օտար կեղեքողներից համարում է ազգային հարցի լուծման բովանդակությունը, իսկ աշխատավորության ազատագրման ուղին՝ զինված ապստամբությունը, հեղափոխությունը[8]։

Նալբանդյանի աշխատությունների վերլուծության ընթացքում Ավդալբեգյանը ընդհանուր առմամբ ճիշտ է գնահատում բուրժուական պետությունների ներքին ու արտաքին քաղաքականության, տնտեսական խնդրի ու քաղաքական ազատության փոխհարաբերության մասին նրա հայացքները, Արևմտյան Հայաստանի ազատագրման նրա հեղափոխական ծրագրի բովանդակությունը, առևտրի և արդյունաբերության զարգացման վերաբերյալ նրա ասույթները։

Ավդալբեգյանը իրավամբ մերժում է Նալբանդյանին ֆիզիոկրատների հետևորդ համարելու հայ գրականության մեջ տարածված տեսակետը այն ճիշտ պատճառաբանությամբ, որ ֆիզիոկրատիզմը բուրժուազիայի գաղափարախոսություն է, որը հիմնավորապես մերժվում է Նալբանդյանի կողմից։ Բայց դրա փոխարեն առաջադրում է այն նույնքան անընդունելի դրույթը, թե Նալբանդյանը մերկանտիլիստ է. ըստ որում, մերկանտիլիստ ոչ արևմտաեվրոպական, այլ նոր՝ հայկական իմաստով, քանի որ մեզ մոտ «մերկանտիլիզմը փառաբանվել է իբրև գյուղացիության բարօրության նպաստելու մի միջոց, նրանով ոգևորվել է հայ գյուղացիության թեորետիկը:

Հայ մերկանտիլիզմը գյուղացիության իդեոլոգիա է»[9]։

Ակնհայտ է, որ հեղինակի այս ընդգծված հետևությունները պետք է մերժվեն, ինչպես որ նա իրավամբ մերժում է Նալբանդյանին ֆիզիոկրատ համարելու սխալ տեսակետը։

Միքայել Նալբանդյանի հայացքների վերլուծության ընթացքում թույլ տրված վերոհիշյալ սայթաքումները, սակայն, ամենևին չեն ստվերում Ավդալբեգյանի այդ արժեքավոր ուսումնասիրությունը։ Նա առաջիններից մեկն

---

7 Թադևոս Ավդալբեգյան, Միքայել Նալբանդյան, Երևան, 1928, էջ 28։

8 Նույն տեղում, էջ 114։

9 Նույն տեղում, էջ 113։

էր, որ հայ քննադատական մտքի ուշադրությունը հրավիրեց հայ հեղափոխական-դեմոկրատական հոսանքի պարագլուխ Միքայել Նալբանդյանի վրա, նրա հեղափոխական գործունեությունը, գրական ժառանգությունը դարձրեց հատուկ ուսումնասիրության նյութ, սոցիալական ուսմունքների լույսի տակ։ 1912 թ. Միքայել Նալբանդյանի աշխարհայացքի այս կարգի սոցիոլոգիական վերլուծությունը իսկական գիտական խիզախում էր, իսկ առանձին վրիպումներն ու սայթաքումները նման դեպքերում գրեթե անխուսափելի են։

Հայ դեմոկրատական շարժման ուշագրավ ներկայացուցիչներից էր Արսեն Թոխմախյանը, որի աշխարհայացքի բնութագրմանը Ավդալբեգյանը նվիրել է առանձին ուսումնասիրություն։ Հետազոտությունը ունի երեք նպատակ. պարզել 1) Թոխմախյանի հայացքները հայ ժողովրդի անցյալի պատմության բովանդակության վերաբերյալ, 2) Թոխմախյանի տեսակետը արդի հասարակության կառուցվածքի մասին և 3) հասարակության վերակառուցման Թոխմախյանի ծրագրի բովանդակությունը։

Թոխմախյանը հիմնավորապես մերժում էր հայ պատմագրության այն հակագիտական տեսակետը, ըստ որի հայ ժողովուրդը ներկայացվում էր որպես միաձույլ ամբողջություն, իսկ նրա պատմությունը՝ որպես թագավորների, նախարարների ու բարձրաստիճան հոգևորականների սխրանքների ու բարեգործությունների անվերջ շղթա[10]։ Ավդալբեգյանը ճիշտ է նկատում, որ Թոխմախյանի մոտ արտահայտված է այն միտքը, որ ազգությունը կապիտալիստական հարաբերությունների ծնունդ է, այն ոչ թե բիոլոգիական, այլ պատմական սոցիալական միավորում է։ Ավդալբեգյանը ցույց է տալիս, որ հեռավոր անցյալի պատմության գնահատման այս գիտական մոտեցումը Թոխմախյանը կիրառում է նաև ժամանակակից հասարակության կառուցվածքի հետազոտության ընթացքում։ Ըստ որում, ժամանակակից հասարակության դասակարգային հակասությունները նա բացահայտում է ոչ թե եվրոպական երկրների կապիտալիստական կարգերի վերլուծությամբ, որն ինքնին խիստ ակներև էր, այլ Արևմտյան Հայաստանում տիրող հարաբերությունների ուսումնասիրության ընթացքում։ Արևմտահայության ազատագրումը համարվում էր հայ քաղաքական հրապարակախոսության հիմնական խնդիրը։ Թոխմախյանը այս հարցում տարակարծություններ չունի հայ մտավորականության հետ։ Թուրք և քուրդ կեղեքիչների լուծն, անշուշտ, անտանելի էր հայ ժողովրդի համար։ Բայց հայ աշխատավորությունը արդյո՞ք միայն կեղեքվում էր օտար բռնակալների կողմից։ Ռուսահայ գրականության մեջ մինչև Թոխմախյանը այսպիսի հարցադրում չի եղել, գրում է Ավդալբեգյանը, մի հարցադրում, որն անակնկալ էր հին ազգասերների համար և զարմանալի նորություն հայ գաղափարական աշխարհում։

Թոխմախյանը օտարազգի կեղեքման, որպես հանրահայտ փաստի մասին, հանգամանորեն չի խոսում, նրա գրիչն ուղղված է արևմտահայերի ունևոր դասի դեմ, որը հայ գյուղացուն ավելի պակաս դաժանությամբ չի կողոպտում, քան թուրք բեկերը[11]։

---

10 Թադ. Ավդալբեգյան, Արսեն Թոխմախյան, Երևան, 1928, էջ 20։

11 Նույն տեղում, էջ 27։

Հասարակության վերակառուցման Թոխմախյանի ծրագրի գիտական արժեքը Ավդալբեգյանը համարում է այն, որ նա արևմտահայերի քաղաքական ազատագրումը դասակարգային շահագործման պրոբլեմի լուծում դեռ չէր համարում։ Հասարակության բոլոր դասակարգերը ձգտում են հայրենիքը ազատագրել բռնակալների լծից, մեկնաբանում է Ավդալբեգյանը Թոխմախյանի պատողություններր, որոնցից յուրաքանչյուրը, սակայն, այդ ազատագրումից ունի իր ակնկալությունները։ Ավդալբեգյանը միաժամանակ ցույց է տվել, որ Թոխմախյանի հասարակության վերակառուցման ծրագիրը զուրկ է տիրող կարգերի նրա քննադատության մարտական ոգուց։ Թոխմախյանը ներքին պատերազմը համարում էր հասարակական շարիք, որը կդառնա ամբողջ հասարակության կործանման պատճառ, գրում է Ավդալբեգյանը։ Դասակարգային հակասություններ բացահայտող մարտիկը հրաժարվում է դասակարգային պայքարից և հանդես է գալիս շահագործողների մտավոր-բարոյական վերածնության քարոզով, որը նա համարում է հասարակության տնտեսական և քաղաքական ազատագրման պրոբլեմի լուծման ուղի։ Այսինքն՝ Թոխմախյանի հասարակության վերակառուցման ծրագրի հիմքում ընկած է բուրժուական լուսավորչի աշխարհայացքը։

Թադևոս Ավդալբեգյանի բազմաբովանդակ գրական ժառանգության մեջ իր ուրույն տեղն ունի մարքսիստական քաղաքատնտեսության պրոպագանդան։ «Կապիտալի» հատորների հայերեն թարգմանությունը նրա արժանավոր երախտիքն է այդ բնագավառում։ Լինելով մարքսիստական քաղաքատնտեսության լավագույն գիտակ, Ավդալբեգյանը Մարքսի ուսումնասիրության մեթոդով հետազոտել և լուսաբանել է Հայաստանի տնտեսական պատմության մի շարք կնճռոտ հարցեր։

Մարքսիստական քաղաքատնտեսությանը նվիրված նրա աշխատություններից հիշատակության արժանի է «Կարլ Մարքսի տնտեսական զարգացման թեորիան» արժեքավոր ուսումնասիրությունը, որի մեջ նա փորձել է ցույց տալ Մարքսի այդ ուսմունքի զարգացման պատմական ընթացքը։

Մարքսիզմի կլասիկների մեծագույն ծառայություններից մեկը հասարակական-տնտեսական ֆորմացիաների մասին ուսմունքի ստեղծումն է։ Ավդալբեգյանը նշում է, որ Մարքսի մոտ առանձնացված են վեց հասարակական տնտեսաձևեր՝ նախնադարյան կոմունիստական, ասիական, անտիկ, ֆեոդալական, կապիտալիստական և սոցիալիստական։ Նա փորձում է հանգամանորեն լուսաբանել ասիական տնտեսաձևի էությունը, որը 20-ական թվականներին վիճաբանությունների առարկա էր։ Մարքսիզմի կլասիկների աշխատություններից կատարված մեջբերումներով Ավդալբեգյանը աշխատում է ցույց տալ, որ ասիական տնտեսաձևի հիմնական առանձնահատկություններն են՝ հողի պետական սեփականությունը, հողային համայնքի առկայությունը և ազատ գյուղացիների գոյությունը, որոնք պատմական զարգացման որոշ շրջաններում կարող են լինել նաև հողի սեփականատեր։ Այս պրպտումներից Ավդալբեգյանը հանգում է հետևյալ ուշագրավ հետևության. «Մասնավորելով խոսքը Հայաստանի տնտեսական զարգացման պատմության մասին՝ պետք է ասենք, որ, այսպես թե այնպես, մեր խորին համոզումով ասիական տնտեսության գաղափարն այս ասպարեզում անգնահատելի ծառայություններ կարող է մատուցանել և պիտի մատուցե մեր ուսումնասիրողներին՝ սրանց զերծ պահելով ամենուրեք պարտադրաբար ստրուկ կամ ճորտ տեսնելու «արդիա-

կան» նախապաշարումից»[12]։ Վերոհիշյալ առանձնահատկություններն, անշուշտ, բնորոշ են Հայաստանի վաղ շրջանի, ինչպես նաև մյուս երկրների տնտեսական զարգացմանը։ Բայց պատմական հետազոտությունները հիմնականում հաստատել են այն իրողությունը, որ ասիական տնտեսաձևը, իր առանձնահատկություններով հանդերձ, եղել է ստրկատիրական արտադրաեղանակի մի տարբերակ միայն, բայց ոչ առանձին հասարակական ֆորմացիա։ Այս հանգամանքը, սակայն, ամենևին չի արժեզրկում Ավդալբեգյանի այն դրույթը, որ Հայաստանի տնտեսական զարգացման պատմության ուսումնասիրողները այդ առանձնահատկությունների կողքով անցնել չեն կարող։

Մարքսի տնտեսական զարգացման տեսության հարցերի շարադրման ընթացքում Ավդալբեգյանը գիտական դիրքերից քննադատում է նաև հասարակության պատմական զարգացման սխալ պարբերացումների հեղինակներին (Վանդերվելգե, Բեռնշտայն, Կաուցկի), որոնց սխեմաներին բնորոշ է էկլեկտիզմը, դասակարգման միասնական սկզբունքի բացակայությունը։

Հիշենք, որ քսանական թվականներին գրեթե տիրապետող էր այն հակագիտական տեսակետը, որ քաղաքատնտեսությունը, իբր թե, զբաղվում է միայն կապիտալիստական հարաբերությունների ուսումնասիրությամբ։ Ավդալբեգյանը հիմնավորապես մերժում է քաղաքատնտեսության այդ սխալ ըմբռնումը, որին նա հակադրում է Էնգելսի այն դրույթը, որ քաղաքատնտեսությունը լայն առումով գիտություն է արտադրության, բաշխման, փոխանակության և սպառման հարաբերությունների մասին հասարակության զարգացման բոլոր ժամանակներում։ Այդ գիտությունը պետք է նոր ստեղծվի, և մարքսիստ տնտեսագետների հիմնական խնդիրն է, գրում է Ավդալբեգյանը, ճգնել ու տքնել Էնգելսի այս կտակի իրագործման ուղղությամբ, զբաղվել նախակապիտալիստական ու սոցիալիստական տնտեսաձևերի զարգացման օրինաչափությունների ուսումնասիրությամբ և ոչ թե ընտրել քաղաքատնտեսության լիկվիդացման ուղին։

Բայց միաժամանակ պետք է նշել, որ Ավդալբեգյանի մոտ Մարքսի տնտեսական զարգացման տեսության և քաղաքատնտեսության միջև ստեղծվել է ինչ-որ անջրպետ։ Մարքսի տնտեսական զարգացման տեսությունը, գրում է նա, լայն «հնարավորություն է ընձեռում ավելի լավ ու խորը ըմբռնելու մի կողմից՝ պատմական մատերիալիզմն ու մյուս կողմից՝ մարքսիստական քաղաքատնտեսությունը»[13]։ Այստեղից Ավդալբեգյանն այն հետևությունն է անում, որ իբր թե մարքսիզմի հիմնադիրները տնտեսական զարգացման տեսության վերաբերյալ մի փոքրիկ գրքույկ անգամ չեն թողել։ Իրականում, սակայն, մարքսիստական քաղաքատնտեսությունը պատմական մատերիալիզմի հետ միասին միաժամանակ հասարակության տնտեսական պատմության տեսությունն է։

Ավդալբեգյանը ավելի հանգամանորեն է զբաղվել Մարքսի ընդլայնված վերարտադրության սխեմաների վերլուծությամբ։ Այդ առանձնահատուկ հետաքրքրությունը հեղինակը պատճառաբանում է նրանով, որ «վերարտադրության տեսության նշանակությունը հսկայական է ոչ միայն կապիտալիստական անկազմակերպ տնտեսության երևույթների ուսումնասիրության ու

12 Թ ա ղ. Ավդալբեգյան, Կարլ Մարքսի տնտեսական զարգացման թեորիան, Երևան, 1926, էջ 45։

13 Նույն տեղում, էջ 6։

ըմբռնման, այլ նաև կազմակերպված սոցիալիստական տնտեսության տեսական ընդգրկման և գործնական պլանավորման համար»[14]։

Մարքսի պարզ վերարտադրության սխեմաներին նվիրված Ավդալբեգյանի ուսումնասիրությունները սկսվում են Ռոզա Լյուքսեմբուրգի քննադատությամբ, ըստ որի ոսկու արտադրության վրա կատարված ծախսումները հասարակական արտադրության առաջին ստորաբաժանման մեջ մտցնելու դեպքում «կխախտվեն մարքսյան սխեմաների բոլոր բնեղեն հարաբերություններն ու արժեքային համամասնությունները և դրանք կդառնան բոլորովին անհիմն»[15]։ Ավդալբեգյանը ցույց է տալիս, որ Մարքսի սխեմաներում առաջին ստորաբաժանման հետ արդեն ձուլված են ոսկու արտադրության վրա կատարված, այսպես կոչված «երրորդ ստորաբաժանման» ծախսումները, որոնք Ռ. Լյուքսեմբուրգը առանձնացնում է որպես ինքնուրույն ստորաբաժանում և, հանելով առաջին ստորաբաժանումից, խախտում սխեմայի համամասնությունները։ Մարքսը պայմանականորեն, պարզության համար է միայն ոսկու արտադրությունը առանձնացնում, որը իրականում արդեն մտել է վերարտադրության սխեմայի առաջին ստորաբաժանման մեջ։ Ըստ որում, Ռ. Լյուքսեմբուրգը Մարքսի վերարտադրության սխեմաների համամասնությունների «խախտումների» հայտնադործումով իր անելիքը համարել է ավարտված՝ առանց դրանց վերականգնման փորձի կամ նոր սխեմայի առաջարկության։ Հետևաբար, նրա «երրորդ դեմքերի» օգնությամբ կապիտալի կուտակման տեսությունը կառուցված է փխրուն ավազի վրա, իրավամբ եզրակացնում է Ավդալբեգյանը։

Մարքսի վերարտադրության տեսության հիման վրա Ավդալբեգյանը կազմում է վերարտադրության սխեմայի նոր տարբերակներ, որոնք արտացոլում են ոսկու շրջանառության օրինաչափությունները։ Հասարակական վերարտադրությունը լինելով արտադրության և շրջանառության պրոցեսի միասնություն, ներառում է նաև շրջանառության ծախսերը, որոնց մի մասը կազմում են ոսկյա դրամամետաղի շրջանառության ուղղությամբ կատարված ծախսումները։ Այնուհետև Ավդալբեգյանը, այսպես ասած, նեղ առումով արտադրության ծախսումները առանձնացնում է ապրանքադրամական ծախսումներից և կազմում պարզ վերարտադրության մեկ տասնյակից ավելի սխեմաներ, որտեղ պարզորոշ ներկայացվում են հասարակական կապիտալի առանձին բաղադրիչ մասերի շրջանառության օրինաչափությունները։

Պարզ վերարտադրությունից հետո Ավդալբեգյանը անցնում է ընդլայնված վերարտադրության սխեմաների մանրազնին վերլուծությանը։ Հանգամանորեն ուսումնասիրելով հասարակական ամբողջական արդյունքի շրջանառության օրինաչափությունները, նա առանձնապես կանգ է առնում կուտակման վրա, հետազոտում նրա չափերը, ինտենսիվության աստիճանը, ցույց տալիս նրա տեղը և դերը հասարակական վերարտադրության ընդլայնման գործում։ Ընդլայնման մասշտաբների սխեմաները քննարկվում են ըստ հընդամայկների, երկու հիմնական տարբերակներով՝ հավելյալ արժեքի ավելաց-

---

[14] Тад. Авдалбегян, Основные гипотетические схемы расширенного воспроизводства, Ереван, 1931, стр. 3.

[15] Тад. Авдалбегян, Золото в схеме простого воспроизводства, Ереван, 1929, стр. 31.

ման հաստատուն նորմայի և պրոգրեսիվորեն աճող նորմայի պայմաններում։

Մարքսի վերարտադրության սխեմաների այս մանրակրկիտ անալիտիկ ուսումնասիրությունը ամենևին չէր սպառվում Մարքսի վերարտադրության ուսմունքի պրոպագանդայով։ Տարիների համառ աշխատանքով Ավդալբեգյանը տեսական պատվանդան էր ստեղծում սոցիալիստական հասարակության վերարտադրության օրինաչափությունների բացահայտման համար։ Այդ ուղղությամբ կատարված աշխատանքի արդյունքները շարադրվում են նրա «Սոցիալիստական տնտեսության պարզ վերարտադրության սխեմաներ» աշխատության մեջ, որը դժբախտաբար չի հրատարակվել։ Հեղինակին հաջողվել է միայն հրատարակել սոցիալիստական տնտեսության պարզ վերարտադրության սխեմատիկ աղյուսակը, որը հավանաբար նրա հիշատակված աշխատության հավելվածն է եղել[16] միայն։ Այդ աղյուսակը ինքնին խոշոր տեսական ու գործնական հետաքրքրություն է ներկայացնում սոցիալիզմի քաղաքատնտեսության ուսումնասիրության համար։

Թ. Ավդալբեգյանը, այսպիսով, բավական խոր ակոս է թողել Հայաստանի տնտեսական պատմության և հայ տնտեսագիտական մտքի պատմության մեջ։ Իր հետազոտություններով Ավդալբեգյանը ուղի է հարթել հայագիտության նշված ճյուղերի զարգացման համար։ Նրա աշխատությունները, հարցերի լայն ընդգրկմամբ և խորությամբ, այսօր էլ չեն կորցրել իրենց գիտական նշանակությունը և կարող են նպաստել գիտության հիշյալ բնագավառների շատ ու շատ պրոբլեմների նորովի լուսաբանմանը։

ЭКОНОМИЧЕСКИЕ РАБОТЫ ТАДЕВОСА АВДАЛБЕГЯНА
(К 90-летию со дня рождения)

Н. Р. ТОВМАСЯН

Резюме

Выдающийся советский армянский экономист Тадевос Авдалбегян (1885—1937) родился в городе Маку (Персия). Начало преподавательской и научной деятельности Т. Авдалбегяна относится к 1907 г.

В годы советской власти Авдалбегян первым в Ереванском университете начал читать курс истории общественной мысли и истории хозяйств. Он создал ценные работы по различным отраслям арменоведения, среди которых центральное место занимают его экономические исследования. В произведениях по экономической истории Армении автор освещает ряд сложных проблем экономического развития средневековой Армении, что явилось ценным вкладом для создания цельной экономической истории этого периода. Примечательны труды Авдалбегяна, посвященные вопросам истории армянской экономической мысли. В них исследуются: 1. экономические идеи народного движения средневековой Армении; 2. экономическое содержание армянского освободительного движения XVIII в.; 3. армянские общественные течения эпохи капитализма; 4. пропагандируется марксистское экономическое учение.

[16] Тад. Авдалбегян, Развернутая схематическая таблица простого социалистического воспроизводства социалистического хозяйства, Ереван, 1932.